ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՄՈՒՇ

1. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ

1) Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և սնանկ ճանաչելու մասին վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է, վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և հաշվանցի հնարավորությունը բացակայում է:

2) Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ճանաչված վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և սնանկ ճանաչելու մասին վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է՝ անկախ հաշվանցի հնարավորության առկայությունից:

3) Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ճանաչված վճարային պարտավորությունների 70-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և սնանկ ճանաչելու մասին վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է:

4) Հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված վճարային պարտավորությունների առնվազն 90-օրյա ժամկետով կետանց՝ անկախ հաշվանցի հնարավորության առկայությունից:

2. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ

1) Եթե պարտապանը և երրորդ անձ գրավատուն ճանաչվել են սնանկ և ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է այդ երրորդ անձի գույքով, ապա այդ գույքի իրացումը կատարվում է պարտապանի սնանկության վարույթում, իսկ եթե այդ գույքը ապահովում է տարբեր պարտապանների պարտավորություններ, ապա այն իրացվում է սնանկության այն վարույթում, որտեղ այդ գույքով ապահովված իրավունքն առաջնային է:

2) Եթե պարտապանը և երրորդ անձ գրավատուն ճանաչվել են սնանկ և ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է այդ երրորդ անձի գույքով, ապա այդ գույքի իրացումը կատարվում է երրորդ անձի սնանկության վարույթում:

3) Եթե պարտապանը և երրորդ անձ գրավատուն ճանաչվել են սնանկ և ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է այդ երրորդ անձի գույքով, ապա այդ գույքի իրացումը կատարվում է պարտապանի սնանկության վարույթում, իսկ եթե այդ գույքը ապահովում է տարբեր պարտապանների պարտավորություններ, ապա այն իրացվում է երրորդ անձի սնանկության վարույթում:

4) Եթե պարտապանը և երրորդ անձ գրավատուն ճանաչվել են սնանկ և ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է այդ երրորդ անձի գույքով, ապա այդ գույքի իրացումը կատարվում է պարտապանի սնանկության վարույթում, իսկ եթե այդ գույքը ապահովում է տարբեր պարտապանների պարտավորություններ, ապա այն իրացվում է սնանկության այն վարույթում, որտեղ պարտապանն առաջինն է ճանաչվել սնանկ:

3. Հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում լիազորված պետական համապատասխան մարմինները, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, ինչ ժամկետում պետք է դիմեն դատարան՝ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով.

1) պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 1 ամսվա ընթացքում.

2) պարտավորության հայտնաբերման պահին՝ անհապաղ.

3) պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 3 ամսվա ընթացքում.

4) պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում:

4. Պարտատերերի ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են.

1) ձայնի իրավունք ունեցող պարտատերերի առնվազն մեկ երրորդը.

2) բոլոր պարտատերերի առնվազն կեսը.

3) ձայնի իրավունք ունեցող պարտատերերի առնվազն կեսը.

4) բոլոր պարտատերերի առնվազն մեկ երրորդը:

5. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ

1) Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմք է ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի ցանկացած խախտումը:

2) Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմք է այն հանգամանքների առկայությունը, որոնք վկայում են, որ պարտապանն ի վիճակի չէ կատարել պարտավորությունների մարման ժամանակացույցը:

3) Ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո դատարան են ներկայացվել նոր պահանջներ և մեկամսյա ժամկետում չեն ներկայացվել ծրագրի փոփոխություններ, որոնք նախատեսում են նաև նոր ներկայացված պահանջների բավարարում:

4) Ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո դատարան են ներկայացվել նոր պահանջներ և մեկամսյա ժամկետում ներկայացվել են նոր ներկայացված պահանջների բավարարում նախատեսող ծրագրի փոփոխություններ, որոնք դատարանի որոշմամբ մերժվել են:

6. Կառավարիչ Կ-ն պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ պարտատերերի առաջին ժողովը նշանակում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կայացնելու օրվանից 35-րդ օրը:

Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը բողոքարկվում է: Կառավարիչ Կ-ն, հաշվի առնելով այն, որ բողոքարկվել են որոշմամբ հաստատված ոչ բոլոր պահանջները հրավիրում և նախագահում է պարտատերերի առաջին ժողովը:

Իրավաչափ են արդյո՞ք հարկադիր դատարանի գործողությունները:

1) Այո:

2) Ոչ, քանի որ դատարանն է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ նշանակում պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը:

3) Ոչ, քանի որ պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կայացնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

4) Ոչ, քանի որ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման բողոքարկումը խոչընդոտ է պարտատերերի առաջին ժողովի անցկացման համար:

7. Դատավորի կողմից պարտապան Պ-ի լուծարման վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ 5-րդ օրը, կառավարիչ Կ-ն դատարանի որոշման հիման վրա արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող ավտոմեքենաները և օգտագործման իրավունքով պատկանող անշարժ գույքը:

Իրավաչափ են արդյո՞ք կառավարիչ Կ-ի գործողությունները:

1) Այո:

2) Ոչ, քանի որ կառավարիչը չէր կարող արգելադրել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող ավտոմեքենաները:

3) Ոչ, քանի որ կառավարիչը իրավունք չունի արգելադրել պարտապանին ինչպես սեփականության, այնպես էլ օգտագործման իրավունքով պատկանող գույքը:

4) Ոչ, քանի որ կառավարիչը չէր կարող արգելադրել պարտապանին օգտագործման իրավունքով պատկանող անշարժ գույքը:

8. Գրավի իրավունքը

1) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի տիրապետման իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար.

2) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի տիրապետման իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած պարտավորության չկատարման դեպքում արգելանք կիրառելու համար.

3) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար.

4) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած պարտավորության չկատարման դեպքում վաճառելու համար.

9. Գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե.

1) կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը հետաձգվում է մինչև այդ կողմերի միջև լրացուցիչ համաձայնության առկայությունը.

2) կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը հետաձգվում է անորոշ ժամկետով.

3) կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞, թե՞ ոչ.

4) կողմերը պայմանագրում այդ մասին կատարում են ուղղակի նշում:

10. Պարտապան Ա-ի կողմից նոր գրավառու Ն-ի հանդեպ պարտավորությունների չկատարման հիմքով նոր գրավառու Ն-ն մինչև գրավի առարկայի բռնագանձման գործընթաց սկսելը նախորդ գրավառու Հ-ին ծանուցում է պարտապան Ա-ի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման դեպքի մասին: Նախորդ գրավառու Հ-ն գրավի առարկայի հետ կապված չի ձեռնարկում որևէ գործողություն: Նոր գրավառու Ն-ն, հիմք ընդունելով վերոգրյալը, դիմում է դատարան գրավառուի գույքի նկատմամբ բռնագանձում

տարածելու պահանջով: Գրավի առարկայի իրացումից հետո նախորդ գրավառու Հ-ն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրավով ապահովված պարտավորությունը չի կատարվել և իր ու պարտապան Ա-ի միջև կնքված գրավի պայմանագրով նախատեսված է գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու հնարավորություն, գրավոր՝ ծանուցում է գրավառու Ն-ի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման համար գրավի առարկայի իրացման արդյունում դրա նոր սեփականատեր Ս-ին՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին:

Իրավաչափ են արդյո՞ք գրավառու Հ-ի գործողությունները

1) Այո:

2) Ո՛չ, քանի որ նշված փստական հանգամանքներում գրավառու Հ-ի պահանջների բավարարման նպատակով գրավի առարկան կարող է իրացվել միայն դատական կարգով բռնագանձում տարածելու միջոցով:

3) Ո՛չ, քանի որ նշված փաստական հանգամանքներում՝ գրավառու Ն-ի պարտավորությունների համար գրավի առարկայի վրա բռնագանձում տարածվելու և գրավի առարկան իրացվելու պայմաններում գրավառու Հ-ի պահանջների բավարարման նպատակով գրավադրված գույքի նկատմամբ գրավը դադարել է:

4) Ո՛չ, քանի որ նշված փստական հանգամանքներում գրավառու Հ-ի պահանջների բավարարման նպատակով գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու համար ծանուցում պետք է ուղարկվեր նաև պարտապան Ա-ին:

11. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ

1) Մի քանի պատասխանողների դեմ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման կամ բնակության վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2) Կատարման վայրի վերաբերյալ ուղղակի նշում պարունակող պայմանագրից բխող հայցը կարող է ներկայացվել պայմանագրի կատարման վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3) Իրավաբանական անձի դեմ հայցը, որը բխում է նրա ներկայացուցչության կամ մասնաճյուղի գործունեությունից, կարող է ներկայացվել համապատասխան ներկայացուցչության կամ մասնաճյուղի գտնվելու վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

4) Շարժական գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը հայցվորի ընտրությամբ կարող է ներկայացվել նրա հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրի կամ նրա գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

12. Առաջին ատյանի դատարանը հայցի ապահովման միջոցներ է կիրառում.

1) գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ.

2) դատարանի նախագահի հանձնարարությամբ.

3) գործին մասնակցող անձի միջնորդությամբ.

4) միայն իր նախաձեռնությամբ:

13. Պատասխանող Պ-ն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման դեմ ներկայացնում է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով այն, որ որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը բացակայում են, գործն ստանալուց հետո երկրորդ օրը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Իրավաչափ են արդյո՞ք վերաքննիչ դատարանի գործողությունները

1) Այո:

2) Ո՛չ, քանի որ վերաքննիչ բողոքի ընդունումը պետք է մերժվեր հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու հիմքով:

3) Ո՛չ, քանի որ վերաքննիչ բողոքի ընդունումը պետք է վերադարձվեր հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու հիմքով:

4) Ո՛չ, քանի որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը պետք է կայացվեր գործն ստանալու օրը:

14. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ

1) Հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի, եթե անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի հիման վրա անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը ստանում է պետական գրանցում:

2) Հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի, եթե անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի հիման վրա անհատ ձեռնարկատերը հանվում է պետական հաշվառումից:

3) Հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի, եթե կազմակերպությունը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվում է սնանկ:

4) Հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի, եթե նոտարի սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին դատարանի վճռի հիման նոտարն ազատվում է պաշտոնից:

15. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ

1)Հանցագործություն է համարվում հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը խոշոր չափերով չվճարելու նպատակով օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը:

2) Հանցագործություն է համարվում հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը խոշոր չափերով չվճարելու նպատակով օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում ակնհայտ կեղծ տվյալ մտցնելը:

3) Հանցագործություն է համարվում հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը առանձնապես խոշոր չափերով չվճարելու նպատակով օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում ակնհայտ կեղծ տվյալ մտցնելը:

4) Հանցագործություն է համարվում օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը:

16. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ

1) Համաչափության սկզբունքի համաձայն՝ հիմնական ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է բավարար լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

2) Համաչափության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է ապահովեն Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումներին հասնելու հնարավորությունը:

3) Համաչափության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

4) Համաչափության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է արդյունավետ լինեն Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումներին հասնելու համար:

17. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ

1) Եթե աճուրդի են ներկայացված մեկից ավելի լոտեր, ապա դրանց վաճառքն իրականացվում է աճուրդի մասին հայտարարությունում շարադրված հերթականությամբ:

2) Եթե աճուրդի են ներկայացված մեկից ավելի լոտեր, ապա դրանց վաճառքն իրականացվում է դատարանի կողմից հաստատված հերթականությամբ:

3) Եթե աճուրդի են ներկայացված մեկից ավելի լոտեր, ապա դրանց վաճառքն իրականացվում է պարտատերերի ժողովի կողմից որոշված հերթականությամբ:

4) Մեկից ավելի լոտերի վաճառքը նույն աճուրդում արգելվում է:

18. Լոտի մեկնարկային գինը

1) լոտի վաճառքի համար նախատեսված գինն է, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին.

2) մասնագիտացված կազմակերպության կողմից լոտի գնահատված արժեքն է.

3) լոտի վաճառքի համար նախատեսված գինն է, որը մրցույթի սկզբում առաջարկվում է մասնակիցներին.

4) լոտի վաճառքի համար նախատեսված գինն է, որը չի կարող գույքի շուկայական գնից ցածր լինել և որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին: